




**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ**

**«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

«6» մայիսի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ  Մ. Անանյան

ԳԲԽ-43/16 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Ասատրյանս» ՍՊԸ-ի 22.04.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Ասատրյանս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 22.04.2016թ. ներկայացրած բողոքով «Ասատրյանս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ծառայության ձեռքբերման նպատակով 27.03.2016թ. հայտարարել է «ՊԸԾՁԲ-ՀՎԿԱԿ-2016-03» ծածկագրով

ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել նաև՝ «Ասատրյանս» ՍՊԸ-ն և «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն:

«Ասատրյանս» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը եղել է 1688400ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, իսկ «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը եղել է 714000ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Պատվիրատուի կողմից Ընթացակարգով նախահաշվային գինը սահմանվել է՝ 3.896.333 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 12.04.2016թ. թիվ 2 արձանագրությամբ արձանագրել է, որ «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը ծառայությունների համար նախատեսված նախահաշվային գնից 5,5 անգամ ցածր է եղել, այսինքն ցածր է եղել տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

Ընկերությունը նշել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 3-րդ ենթակետը, վերը նշված արձանագրության 2.3 կետով որոշել է ծանուցել «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ին թիվ 1 չափաբաժնի վերաբերյալ 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գնային առաջարկի լրացուցիչ հիմնավորում, սակայն վերջինս չի հանդիսացել տվյալ գնման ընթացակարգի մասնակից:

Այսուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 19.04.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3.1-րդ կետով որոշել է «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ին ճանաչել Ընթացակարգի հաղթող մասնակից, քանի որ վերջինիս կողմից ներկայացված լրացուցիչ հիմնավորումը գնահատվել է բավարար:

Ըստ Ընկերության՝ այսպիսի պայմաններում «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը ենթակա էր մերժման:

«Ասատրյանս» ՍՊԸ-ն գտել է, որ Պատվիրատուի կողմից խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ, 6-րդ, 30-րդ հոդվածներով, Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ:

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին որևէ անձի մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունը ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ:

Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին: Ընդ որում, գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

Ընկերությունը հայտնել է, որ վերոնշյալ իրավական նորմերից ակնհայտ երևում է, որ Պատվիրատուն ակնհայտորեն սուբյեկտիվ մոտեցում է ցույց տվել «Էվլիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ին և նույն կերպ էլ գնահատել վերջինիս կողմից ներկայացված հիմնավորումները, որի արդյունքում հաղթող է ճանաչել վերջինիս՝ հաշվի չառնելով գործի կարևորությունը և այս գործում անաչառ մոտեցումը:

«Ասատրյանս» ՍՊԸ-ն նշել է, որ 13.04.2016թ. ստացել է արձանագրության փոփոխված տարբերակը, սակայն դա որևէ կերպ չի կարող անդրադառնալ վերոնշյալ խախտումների և սուբյեկտիվ մոտեցման հետ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.04.2016թ. թիվ 3 արձանագրության 3.2-րդ կետով սահմանվել է անգործության ժամկետ մինչև 24.04.2016թ., իսկ Օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը կարող է ներկայացվել միայն սույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ խորհուրդն իրավունք ունի ընդունել հետևյալ որոշումները՝

1) որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառելու ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը, այդ թվում՝ գնումների ընթացակարգը կամ

պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը կասեցնելուն ուղղված միջոցներ:

2) դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ, այդ թվում՝ սույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Օրենքի 49-րդ հոդվածի համաձայն՝ բողոքն ինքնաբերաբար չի կասեցնում պայմանագրի կնքման ընթացակարգը, սակայն մինչև խորհրդի կողմից սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով նախատեսված որոշման ընդունումը պատվիրատուն իրավունք չունի պայմանագիր կնքելու:

Ընկերությունը խնդրել է կասեցնել «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի և «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև պայմանագրի կնքման գործընթացը, քանի որ պայմանագիր կնքելու դեպքում «Ասատրյանս» ՍՊԸ-ն կարող է կրել վնասներ, իսկ բողոքը բավարարելու դեպքում կարող է առաջացնել անհարկի խոչընդոտներ ընթացակարգի հետագա շարունակությունն ապահովելու համար, ինչպես նաև դադարեցնել «ՊԸԾՁԲ-ՀՎԿԱԿ-2016-03» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.04.2016թ. թիվ 2 արձանագրության 2.3-րդ կետով և 19.04.2016թ. թիվ 3 արձանագրության 3.1-րդ և 3.2-րդ կետերով կայացված որոշումները:

2. «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն»

ՊՈԱԿ կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը 04.05.2016թ. թիվ ԱՎ/01/08.4/30665-16 գրությամբ «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից կազմակերպված «ՊԸԾՁԲ-ՀՎԿԱԿ-2016-03» ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացել «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն, «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ն և «Ասատրյանս» ՍՊԸ-ն:

Հայտերի բացման նիստի արձանագրությունը 12.04.2016թ. ուղարկվել է կողմերին:

Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի հիմքով 12.04.2016թ. ծանուցում է ուղարկվել առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Էվլիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ին՝ գնային առաջարկի լրացուցիչ հիմնավորում ներկայացնելու նպատակով: Նույն օրը Ընթացակարգի առաջին և երկրորդ տեղեր զբաղեցրած մասնակիցների (համապատասխանաբար «Էվլիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ և «Ասատրյանս» ՍՊԸ) հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցում է ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն: Հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրության 2.3-րդ ենթակետում տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, այն է՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի անվանման փոխարեն գրվել է տվյալ գնման ընթացակարգի հետ առնչություն չունեցող կազմակերպության անվանում: Նշված վրիպակը շտկվել է, ինչի վերաբերյալ 13.04.2016թ. տեղեկացվել է Ընթացակարգի մասնակիցներին:

Պատվիրատուն նշել է, որ Ընկերության կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 22.04.2016թ. բերված բողոքում թիվ 2 արձանագրության 2.3-րդ ենթակետում տեղ գտած անճշտությունը որպես խախտում որակելը անհիմն է, քանի որ՝

ա) հանձնաժողովի որոշումից բխող գործողությունները, այն է՝ 12.04.2016թ. ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված հարցումը և Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի հիմքով գնային առաջարկի լրացուցիչ հիմնավորում ներկայացնելու ծանուցումն ապացուցում են, որ «Էվլիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն դիտարկվել է որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից,

բ) վրիպակը ժամանակին հայտնաբերվել և ուղղվել է գնահատող հանձնաժողովի կողմից և 13.04.2016թ.-ին ծանուցվել է Ընթացակարգի մասնակիցներին:

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից 14.04.2016թ. ներկայացված գնային առաջարկի լրացուցիչ հիմնավորումը գնահատվել է բավարար:

Ըստ Պատվիրատուի՝ «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից Գնումների բողոքարկման խորհրդին 22.04.2016թ. բերված բողոքով «Էվլիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի լրացուցիչ հիմնավորման բավարար գնահատվելն առանց որևէ տրամաբանական հիմնավորման որակվել է «սուբյեկտիվ», իսկ «Էվլիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկն՝ իրականում չհիմնավորված ցածր: «Էվլիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի կողմից

ներկայացված 714.000 ՀՀ դրամ գինը Պատվիրատուն համարել է միանգամայն իրատեսական, քանի որ այն էականորեն չի տարբերվում 2015թ. «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կնքված 2014թ. տարեկան ֆինանսական հաշվետվության աուդիտի ծառայությունների ձեռք բերման «ՊԸԾԶԲ-ՀՎԿԱԿ-2015-02-01» (am-as-15-003) նմանատիպ պայմանագրի գնից, որը կազմել էր 888,000.00 ՀՀ դրամ և որի կողմ է հանդիսացել հենց ինքը՝ «Ասատրյան» ՍՊԸ-ն: Պատվիրատուն ավելացրել է, որ «Ասատրյան» ՍՊԸ-ի գնային առաջարկը 974,400.00 ՀՀ դրամով կամ մոտ 2,3 անգամ գերազանցել է «Էվլիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացությունը՝ «Էվլիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն ճանաչվել է հաղթող և սահմանվել է անգործության ժամկետը մինչև 24.04.2016թ.: 25.04.2016թ. դրությամբ Ընթացակարգի արդյունքում պայմանագրի կնքման կասեցման հիմքեր, ինչպես նաև պայմանագիր կնքելու համար որևէ խոչընդոտներ չեն եղել և «Էվլիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի հետ կնքվել է «ՊԸԾԶԲ-ՀՎԿԱԿ-2015-02-01» պայմանագիր:

Պատվիրատուն հայտնել է, որ «Ասատրյան» ՍՊԸ-ի կողմից Գնումների բողոքարկման խորհրդին 22.04.2016թ. բերված բողոքում որևէ ապացույց չի ներկայացվել այն մասին, որ Օրենքի 3-րդ, 6-րդ և 30-րդ հոդվածներով, ինչպես նաև Կարգի 47-րդ հոդվածի 3-րդ ենթակետի պահանջների խախտման վերաբերյալ: Գնման ընթացակարգն իրականացվել է Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով ամրագրված, գնումներին մասնակցելու հավասարության սկզբունքները պահպանվել են, Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման նիստի արձանագրությունը պարունակել է տեղեկություններ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ, Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ, գնային առաջարկի վերաբերյալ:

3. ԳԲԽ-43/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-43/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ֆինանսական հաշվետվության աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՊԸԾՁԲ-ՀՎԿԱԿ-2015-02-01» ծածկագրով պարզեցված ընթացակարգ:

2. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Էն Աուդիտ» ՍՊԸ-ն, «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ն, «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն և «Ասատրյանս» ՍՊԸ-ն:

3. «Ասատրյանս» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած գնային առաջարկը կազմել է **1688400 (մեկ միլիոն վեց հարյուր ութսունութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն, իսկ «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը կազմել է **714000 (յոթ հարյուր տասնչորս հազար) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.04.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ նշվել է, որ Պատվիրատուի 2015թ. ֆինանսական հաշվետվության աուդիտի ծառայության նախահաշվային ընդհանուր գինը կազմել է՝ **3896333 (երեք միլիոն ութ հարյուր իննսունվեց հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ**:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը վերը նշված արձանագրության 2.3-րդ կետով որոշել է ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետով ծանուցել «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ին՝ 1-ին չափաբաժնի վերաբերյալ 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գնային առաջարկի լրացուցիչ հիմնավորում՝ նշելով, որ հանձնաժողովի հաջորդ նիստը կիրավիրվի 2016թ. ապրիլի 18-ին ժամը 10:00-ին:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 13.04.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության փոփոխված տարբերակն ուղարկվել է մասնակիցներին, որի 2.3-րդ կետով որոշվել է, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 3-րդ

ենթակետով, ծանուցել «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ին՝ 1-ին չափաբաժնի վերաբերյալ 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գնային առաջարկի լրացուցիչ հիմնավորում, միաժամանակ տեղեկացնելով, որ հանձնաժողովի հաջորդ նիստը կկայանա 19.04.2016թ. ժամը 10:00-ին:

7. «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն, որպես գնային առաջարկի լրացուցիչ հիմնավորում, 14.04.2016թ. թիվ ՄՊ-28 գրությամբ Պատվիրատուին հայտնել է, որ վերջինս աուդիտորական գործունեությամբ զբաղվում է 2000թ.-ից, աշխատակազմում ընդգրկված են բարձրակարգ աուդիտորներ, հաշվապահներ, այլ մասնագետներ:

«Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն նշել է, որ Պատվիրատուի 2015թ. ֆինանսական հաշվետվությունների իրականացման համար «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված գինը՝ 714.000 ՀՀ դրամը (ներառյալ ԱԱՀ-ն) բավարար է այդ ծառայության մասով ինքնաձախսաձածկ և նվազագույն շահույթ ապահովելու համար: Ընկերության փորձառու աուդիտորական կազմի առկայությունը, մշակված աուդիտորական ընթացակարգերը, «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի 2013-2014թթ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական ծառայությունների ընթացքում կուտակված բազային ինֆորմացիան հաշվառման, ներքին վերահսկողության համակարգերի և հաշվետվողականության վերաբերյալ բավարար երաշխիք են «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ-ի 2015թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտը սահմանված ժամկետում կնքվելիք պայմանագրի պայմաններին համապատասխան իրականացնելու համար:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.04.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության՝

- 1-ին կետով որոշվել է «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկի համար ներկայացված լրացուցիչ հիմնավորումը գնահատել բավարար,
- 3.1-րդ կետով որոշվել է «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ին ճանաչել հաղթող,
- 3.2-րդ կետով որոշում է կայացվել մինչև 24.04.2016թ. սահմանել անգործության ժամկետ, որից հետո պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնել «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ին:

9. «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի և «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի միջև **25.04.2016թ.** կնքվել է ֆինանսական հաշվետվության աուդիտի ծառայության ձեռքբերման «ՊԸԾՁԲ-ՀՎԿԱԿ-2015-02-01» ծածկագրով պայմանագիր:

10. «Ասատրյանս» ՍՊԸ-ն «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին բողոքը ներկայացրել է **22.04.2016թ.**, որով միջնորդել է նաև կիրառել ժամանակավոր միջոց, այն է կասեցնել «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի և «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև պայմանագրի կնքման գործընթացը:

11. Գնումների բողոքարկման խորհուրդը՝ ի դեմս ԳԲԽ-43/16 բողոքը քննող հանձնաժողովի, **05.05.2016թ.** բավարարել է «Ասատրյանս» ՍՊԸ-ի միջնորդությունը՝ «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի և «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև պայմանագրի կնքման գործընթացը կասեցնելուն ուղղված ժամանակավոր միջոց կիրառելու վերաբերյալ:

4. ԳԲԽ-43/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Ասատրյանս» ՍՊԸ-ի 22.04.2016թ. ներկայացրած բողոքը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 04.05.2016թ. թիվ ԱՎ/01/08.4/30665-16 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, հայտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ *օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է*, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

Օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ

մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կնքած պայմանագիրն առոչինչ է:

Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն **նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:**

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ Խորհուրդն իրավունք ունի ընդունել հետևյալ որոշումները՝

1) որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառելու ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը, այդ թվում՝ **գնումների ընթացակարգը կամ պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը կասեցնելուն ուղղված միջոցներ:**

2) դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ, այդ թվում՝ սույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Օրենքի 49-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ Խորհուրդը կայացնում է բողոքը ներկայացրած անձի պահանջած ժամանակավոր միջոցը կիրառելու մասին որոշում, եթե նման միջոցը պատշաճ և անհրաժեշտ է ակնկալվող վնասը մինչև բողոքի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը կանխելու համար:

- 3-րդ մասի համաձայն՝ **բողոքն ինքնաբերաբար չի կասեցնում պայմանագրի կնքման ընթացակարգը, սակայն մինչև խորհրդի կողմից սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով նախատեսված որոշման ընդունումը պատվիրատուն իրավունք չունի պայմանագիր կնքելու:**

Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝ ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ: Նույն մասով սահմանված ժամկետում **փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ ներկայացված հիմնավորումները** գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին: Ընդ որում, գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

Այսպիսով, ըստ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի գնումների պլանի՝ Պատվիրատուի 2015թ. ֆինանսական հաշվետվության աուդիտի ծառայության նախահաշվային ընդհանուր գինը կազմել է **3896333 (երեք միլիոն ութ հարյուր իննսունվեց հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ**: «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգով ներկայացված գնային առաջարկը կազմել է **714.000 (յոթ հարյուր տասնչորս հազար) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն, որը ցածր է եղել տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

Հետևաբար, Պատվիրատուն, առաջնորդվելով Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետով պահանջել է, որպեսզի «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն ներկայացնի 75 տոկոսից ցածր **գնային առաջարկի վերաբերյալ հիմնավորում**: «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն որպես չհիմնավորված ցածր գնային առաջարկի հիմնավորում ներկայացրել է Պատվիրատուին 14.04.2016թ. թիվ ՄՊ-28 գրությունը, որով հայտնել է, որ վերջինս աուդիտորական գործունեությամբ զբաղվում է 2000թ.-ից և աշխատակազմում ընդգրկված են բարձրակարգ աուդիտորներ, հաշվապահներ, այլ մասնագետներ:

«Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն նշել է նաև, որ Պատվիրատուի 2015թ. ֆինանսական հաշվետվությունների իրականացման համար «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված գինը՝ 714.000 ՀՀ դրամը (ներառյալ ԱԱՀ-ն)

բավարար է այդ ծառայության մասով ինքնաձախսածակ և նվազագույն շահույթ ապահովելու համար: Ընկերության փորձառու աուդիտորական կազմի առկայությունը, մշակված աուդիտորական ընթացակարգերը, «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի 2013-2014թթ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական ծառայությունների ընթացքում կուտակված բազային ինֆորմացիան հաշվառման, ներքին վերահսկողության համակարգերի և հաշվետվողականության վերաբերյալ բավարար երաշխիք են «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ-ի 2015թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտը սահմանված ժամկետում կնքվելիք պայմանագրի պայմաններին համապատասխան իրականացնելու համար:

Ուսումնասիրելով «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի կողմից Պատվիրատուին ներկայացված 14.04.2016թ. թիվ ՄՊ-28 գրությունը, գտնում ենք, որ այն չի կարող դիտվել է որպես չհիմնավորված ցածր գնային առաջարկի հիմնավորում, այն լոկ Ընկերության հայտարարությունն է՝ առ այն, որ «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն պատրաստ է 714.000 ՀՀ դրամով բարձրակարգ աուդիտորների, հաշվապահների և այլ մասնագետների միջոցով սահմանված ժամկետում պատշաճ կատարել կնքվելիք պայմանագիրը, ինչն, ըստ էության, արդեն իսկ հավաստված էր Ընկերության ներկայացրած հայտով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Պատվիրատուն «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի ներկայացված լրացուցիչ հիմնավորումը գնահատելով բավարար՝ խախտել է Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները:

Ինչ վերաբերում է նրան, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.04.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ ծանուցվել է «Կոնցեն-Էներգոմաշ» ՓԲԸ-ին՝ 1-ին չափաբաժնի վերաբերյալ 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գնային առաջարկի լրացուցիչ հիմնավորում, ապա այս կապացությամբ հայտնում ենք, որ առկա վրիպակը հաջորդ օրը՝ 13.04.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստով շտկվել է, արդյունքում թիվ 2 արձանագրության փոփոխված տարբերակն ուղարկվել է մասնակիցներին: Ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.04.2016թ. թիվ 2 արձանագրության 2.3-րդ կետով կայացված որոշումը դադարեցնելու մասին Ընկերության պահանջը ենթակա է մերժման:

«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի և «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի միջև **25.04.2016թ.** կնքված ֆինանսական հաշվետվության աուդիտի ծառայության ձեռքբերման «ՊԸԾՁԲ-ՀՎԿԱԿ-2015-02-01» ծածկագրով պայմանագրի կապակցությամբ հայտնում ենք, որ Ընկերությունը **22.04.2016թ.** ներկայացրած բողոքով, հիմք ընդունելով Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջը, միջնորդություն է ներկայացրել «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի և «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև պայմանագրի կնքման գործընթացը կասեցնելուն ուղղված ժամանակավոր միջոցներ կիրառելու մասին:

Հայտնում ենք, որ Օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ բողոքը ինքնաբերաբար չի կասեցնում պայմանագրի կնքման ընթացակարգը, **սակայն մինչև խորհրդի կողմից սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով նախատեսված որոշման ընդունումը պարտվորատուն իրավունք չունի պայմանագիր կնքելու, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքը համարվում է անվավեր:**

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից 22.04.2016թ. բողոքով ներկայացվել է միջանկյալ ընթացակարգ կիրառելու վերաբերյալ միջնորդություն, ինչի պայմաններում մինչև խորհրդի կողմից համապատասխան որոշման ընդունելը (05.05.2016թ. Խորհրդի որոշմամբ միջնորդությունը բավարարվել է), Օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով, Պատվիրատուն իրավունք չունի կնքելու պայմանագիր, ուստի «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի և «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի միջև (մինչև միջնորդության կապակցությամբ որոշում կայացնելը) 25.04.2016թ. պայմանագիրը կնքվել է Օրենքի պահանջների խախտմամբ, իսկ նման պայմանագիրը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն, անվավեր է:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից 22.04.2016թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

1. Դադարեցնել «ՊԸԾՁԲ-ՀՎԿԱԿ-2016-03» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.04.2016թ. թիվ 3 արձանագրության 3.1-րդ և 3.2-րդ կետերով կայացված որոշումները:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.04.2016թ. թիվ 2 արձանագրության 2.3-րդ կետով կայացված որոշումը դադարեցնելու մասին պահանջը՝ մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝




Հ. Այոնց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի վարիչ՝



Մ. Կատվայան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-43/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Գրիգորյան